

գործէ, միշտ յիշատակելով Յառուստի այն խրատը, թէ

Die That ist alles, nichts der Ruhm.

Գործն է ամենայն ինչ ոչ ինչ է փառաւորութեանը:

Աւելի բացայայտ կերպով Աւետարանը նոյն խրատը կարդում է այսպէս. «Նորաբք, ես ոչ համարիմ՝ զանձն իմ թէ հասեալ իցեմ. բայց մի ինչ է՝ զի զառ ի յետոյսն մոռացեալ է, և ի յառաջադէմսն նկրտեալ եմ: Աւշ եղեալ ընթանամ ի կէտ վերին կոչման Աստուծոյ . . . Բազումք են որոց կատարածն կորուստ է, և փառք՝ ամօթն իւրեանց, որք զերկրաւորս և եթ խորհին: Այլ մեր անաքինութիւն յերկինս է՝ ուստի և Փրկչին ակն ունիմք»: Առաքեալի պատուէրով պէտք է միշտ գործել ձեռնունայն չմնալ, մոռանալ անցեալի զառնութիւնները, նկրտել զէպի յառաջ, զէպի ապագան և երբէք չմոռանալ վերին կոչումը:—

Այսպէս ուրեմն յայտնի է, որ անյաջողութեանց բուն արմատը՝ փառքի ծարաւով խոչընդոտներէց վախենալն է եղել և անգործ մնալը. և եթէ այդպէս է, ապա ուրեմն գիրք հրատարակելը անխորհուրդ էր: Եթէ զիրքը մի պարսաւագիր էր, աւելի ինքը պարսաւողը նշաւակուեցաւ, որից ոչ որ օգուտ չունի: Եթէ ուղեց ցաւին զարման զանել, մենք տեսանք, թէ ինչպէս անգոր հանդիսացաւ:

Բայց կարելի է զիրքը նոր տեսակէտներ է պարունակում: Աւագ, որ հէնց այս կողմից գիրքը ակարագոյն է:—Մի օր «Արարատում» տպուեցաւ Արշէն երեցի քարոզը, իսկ «Մշակի» մէջ՝ Ալ. հասարակ յօդուածը, որ անզ արդէն բոլորը լիութի ասուեցաւ, ինչ որ այժմ ձանձրալի կերպով խիստ երկար ու ձիգ կրկնվում է: Այն դէպքը մի սքանչելի զաս էր մեզ համար: Արդ, ինչ որ այն ժամանակ ազմուեցաւ, որդին հօր դէմ զինելու փորձ եղաւ, միթէ հերիք չպէտք է համարուի բազմաշարշար Հայոց ազգի համար. միթէ այն մի միտքարական հանդէս էր, որ այսօր ևս ուզենանք կրկնել նոյնութեամբ:

Թէ մի անգամ արդէն լարեալ յարաբերութիւնն զորպիսիս երբեմն խնդրի, նիւթս վիրաւորելոյ, ցուցանէ այն զի հեղինակն արժան չդատեց իւր հրահանգիչ գրքի մի օրինակը հոգեւորականների պաշտօնական

թերթին՝ «Արարատին ևս ուղարկելու» այլ և խորհրդաւոր բան համարեց ամենից ձանաչուած և յարգուած արքեպիսկոպոսին սոսկ «Եպիսկոպոս» կոչելու, ակամայ յիշեցնելով, թէ երբեմն մի աշխարհական Բիսմարկ նոյնպէս արհամարհել է իրան շնորհած զքսութեան պատիւն ու աստիճանը:

Մինչև որ կատարեալ համերաշխութիւն չլինի, ոչ քահանայ կունենանք, ոչ պաշտօնական թերթ, ոչ դպրոց և ձեմարան . . . Ինչ շահ ունինք բժախնդիր հատորներ հրատարակելուց . . . «Եթէ զլեզու մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց և զի ոչ ունիցիմ, եղէ ես իրբև զպղինձ որ հնչէ, կամ իրբև զձնձղայս, որ զօղանջն»:

Վերջապէս միթէ չպէտք է խրատուինք Առաքեալի այն խօսքերէց, որ նա ուղղել է մեզ պէս պառակտուած Գաղատացիներին. «Ապա եթէ զմիմեանս խածատիցէք և ուտիցէք, զգոյշ լերուք, զուցէ ի միմեանց սատակիցիք»:

Ս. Մ.

Բ.

Тексты и Разыскания по Армянно-Грузинской филологии. I. *Евфрем Сиризм.*

- А. О дняхъ празднованія Рождества.
- Б. Объ основаніи первыхъ церквей въ Иерусалимѣ.

Армянскій Текстъ съ сирійскими отрывками въ Армянской транскрипціи XII—XIII вѣка. Исследоваль, издалъ и перевелъ Н. МАРРЪ.

Խոչոր տառերով տպուած ընդհանուր վերնազրի տակ մեր ընթերցողներին քաջ յայտնի՝ Պետերբուրգի համալսարանի հայագիտութեան պրով. Ն. Մատը այս անգամ ուսումնասիրում և հրատարակում է Մայր Աթոռի մասնադարանի № 919 (կար. 899) ձեռագրի երկու հատուածը, որ վերագրուած է Եփրեմ Ասորուն: Բնագիրը խառն է, հայոց

առուերով գրուած ստորերէն հասուածներով
և հէնց այս կողմից յարգելի զխոնականի աշ-
խատութիւնը արժանի է առանձին ուշադրու-
թեան:

Պ. Մառը այդ ձեռագրի վերայ ուշա-
դրութիւն է դարձրել շատ վաղ՝ 1889 թ.,
երբ առաջին անգամ ծանօթանում էր Մայր
Աթոռի մասնագարանի հետ բայց ուսում-
նասիրութեան նիւթ դարձրել է միայն 1899
թ., վերջին անգամ էջմիածնում գտնուելու
ժամանակ: Ահա այդ տեսրակի ամփոփ բո-
վանդակութիւնը:

Հեղինակը նախ նկարագրում է ձեռա-
գիրը և վկայութիւններ (ցիտատ) բերում
զբէի յիշատակարանից, որ շատ կարեւոր տե-
ղեկութիւններ է տալիս ոչ միայն զբէի և
գրութեան ժամանակի մասին (Յամի վեցհա-
րիւրորդի վաթսնորորդի չորրորդի ի թուա-
կանութեան հայոց . . . (664+551=1251)
ի թագաւորութեանն Հայոց Աւոնի յաղթողի
և բարեպաշտի և ի հայրապետութեանն տեառն
Յովհաննիսի հայոց կաթողիկոսի), այլ և
թարգմանչի մասին (ԶՎեորդ մեղապարտ յի-
շեաջիք մեղաց թողութեամբ ի Քս. որ զայս
հանդիսաւոր ճառս թարգմանեցի ի քարաքս
Քեսոն վասն սիրոյ և խաղաղութեան): Պ.
Մառը աչքի առաջ ունենալով վերոյիշեալ
նկատողութիւնը և ուղղագրական մի քանի
առանձնայատկութիւններ, իրաւամբ յայտ-
նում է, որ թարգմանիչը Վիլիկեան շրջանի
անձն է և ամենավաղը ժ.Վ. դարում, իսկ
ամենից ուշ ժ.Վ. դարու առաջին քառոր-
դում պէտք է կատարել իւր թարգմանու-
թիւնը:

Մեր եկեղեցու հայրերը բաղմամբի-
վկայութիւններ ունին ժողոված ցոյց տալու
համար, թէ ծննդեան տունը պէտք է յուն.
6-ին կատարել և ոչ դեկտ. 25-ին, ինչպէս
միւս քրիստոնեաներն են տօնում: Այդ-
պիսի գրութիւններից մէկն է «Վկայութիւն
վաննագրով զանապան հայրերից քաղած հա-
տուածների ժողովածուն, որ հրատարակել
է Արարատ-ի 1896 թ. յունուարի տես-
րակում՝ Կարապետ վարդապետ Տ. Մկրտչեան

մի յառաջարանով: * Պ. Մառի հրատարակած
առաջին գրութեան մի հասուածը գտնուում
է վերոյիշեալ վկայութիւնների մէջ: Կ. Վ. ի
հրատարակութիւնը կարեւոր նշանակութիւն
ունի Մառի համար այն տեսակետով, որ մի
վկայութիւն էլ Շնորհալու այն թղթից է
առնուած, որ զբէի և Մանուէլ կայսեր փե-
սայի խնդիրքով 1165 թ. է թէ Շնորհա-
լուց առնուած վկայութիւնը յետոյ չէ ա-
ւելացրած ամբողջութեան վերայ, պէտք է
ընդունենք, որ այդ վկայութիւնները ի մի են
հաւաքուած Շնորհալուց քիչ յետոյ: Կ. Վ. ի
հրատարակած վկայութիւններից մէկը՝ ի հար-
ցաքնութեանց Ասորոց վարդապետաց, վեր-
նագրով, առնուած է եփրեմ Ասորու անու-
նով մնացած անվաւերական այն գրութիւնից,
որ հրատարակում է այժմ պ. Մառը: Այսպի-
սով կարելի է մօտաորակէս որոշել թէ
վկայութիւնների ժողովածուն ծագել է ժ.Վ.
դարում, որով և սահմանուած կլինի եփրեմ
Ասորու անունով մնացած գրութեան թարգ-
մանութեան ժամանակը:

Սակայն ստորերէն բնագրի ծագումը կա-
րելի չէ եփրեմի անուան հետ կապել այն պարզ
պատճառով, որ նորա օրով դեռ ևս միտու-
թեան և ծննդեան տօների միաժամանակ
կամ բաժանուած տօնելու խնդիր չկար:
Երկը անվաւերական է անշուշտ բայց ան-
կասկած նորա ծագումը ասորական է և
հին: Այս երկի հիմնական մարբերը, որով
պէտք է սպացուցուի թէ ծննդեան տունը
պէտք է յուն. 6-ին կատարել, նման է եփ-
րեմ Ասորու «Ճառ ծննդեանին»: Գրութեան
հարցական ձևը օտար չէ ասորական գրակա-
նութեան մէջ: Այս գրութեան մէջ եփրեմ
Ասորու աշակերտների մէջ յիշուում են Զե-
նոր և Սահակ (Պարթե?): Bedjan-ի հրատարա-
կած եփրեմի անվաւերական վարքագրութեան
մէջ, որ ըստ Noldeke-ի շատ վաղ ժամանակ-
ներից յայտնի էր և զորմ էր ամուսնում որ-

* Վկայութիւններից հասուածներ կան առնուած Մեյի-
տնից, Հիպոլիտից, որ աւելի վաղ հրատարակել է Պիտան
1883 թ. Analecta sacra specilegio dolesmensi parata IV.
Ապա Հ. Տաշեան յիշել է իւր Վիեննայի Ձեռագրաց ցուցա-
կի մէջ եր. 722^թ և 768^թ:

պէս եփրեմի կենսապրութեան աղբիւր: յիշ-
ւում են յիշեալ երկու անձինքը իբրև եփրե-
մի աշակերտ: Պ. Մասի կարծիքով այդ երկը
մի այնպիսի մարդու գործ է, որին ծանօթ էին
եփրեմի ասորերէն վարքագրութիւնները:

Ծննդեան տօնը կատարելու ժամանակը
վիճարանութեան նիւթ է, եղև նաև Հայոց և
Ասորոց մէջ. Բերլինի արքայական մատենա-
դարանի մի ձեռագրի համեմատ* Յակովբի-
ների Յովհաննէս կամ Եշու Բարշուշան պատ-
րիարքը 1073 թ. Հայոց կաթողիկոսին մի
թուղթ է գրել թէ ի՞նչու իրենք ծննդեան
տօնը միւս ազգերի հետ չեն կատարում:
Սասարոսի է այս վերնագիրը, որովհետև Ասոր-
բնէրը X—XI դարերում ծննդեան տօնը
կատարում էին միւս ազգերի հետ: Բայց
Մասը բացատրում է այս հակասութիւնը
նորանով, որ վերնագրի միայն Հայոց Ասորի-
ների դէմ յայտնած մեղադրանքներէց մէկն
է: Բարշուշան յուն. 6-ին տօնելու սովորու-
թիւնը աւելի հին է համարում, բայց զեկտ.
25-ին կատարելը իւր հաշուով աւելի ճիշդ:
Նոյն խնդրի մասին գրել է նաև Յամիզի
կաթողիկոս Վիտնեսիոս Բարսալիբին Աւետա-
րանի մեկնութեան մէջ՝ Հայոց դէմ ամենա-
խիստ լեզու գործածելով: Ասիայի մի անյայտ
հեղինակ Բարսալիբի յիշեալ երկի մի ձե-
ռագրի լուսանցքում՝ արդարացիւմ է Հայոց
սովորութիւնը՝ հիմնուելով եփրեմի խօսքերի
վերայ:** Յունուարի 6-ին տօնելու սովորու-
թիւնը քրիստոսապաշտութեան նիւթ է դարձել
նոյն իսկ Ռուսոց առաւածարանական մա-
տենապրութեան մէջ: Ենորհայու հաւատոյ
վերլուծութիւնը ռուսերէն լեզուով թարգ-
մանել է Խաղարաշեանս*** իսկ Հայոց դաւա-
նարանութեան մասին առանձին ռուս. մատի-
րութիւն ունի II. Троицкий, † որի մի սխա-

լը թէ Հայերը ծնունդը յուն. 6-ին են կա-
տարում միաբնակութեան ազդեցութեամբ,
ուզում է: Ընդհակառակ ինչպէս աւսանք
միաբնակ Յակովբի Բարսալիբին, Հայերին
հայհոյում է յուն. 6-ին կատարելու համար:
Ենորհային ծննդեան տօնը տարբեր ժամանակ-
ներում կատարելու ապացոյցներն առած է
Յովհաննէս Նիկիացու Չարարիս կաթողիկոսին
գրած թղթից, †† իսկ Յովհաննէսը Վիւրկ
Երուսաղեմացու անունով մնացած անվաւերա-
կան մի գրութիւնից: Ինչպէս յայտնի է Ենոր-
հային ծննդեան և յայտնութեան տօների
բաժանումը բացատրում է նրանով, որ Բեթ-
ղեհեմի և Յորդանանի հեռավորութեան պատ-
ճառով Երուսաղեմացիք չէին կարողանում մի
և նոյն օրը իրենց տեղերում կատարել այդ
երկու տօնը: Պ. Մասի հրատարակած նոր
գրութիւնը ուրիշ կերպ է բացատրում ծննդ-
եան տօնի յուն. 6-ին կատարելու սովորու-
թիւնը, նման Բարսալիբի ձեռագրի լուսանց-
քում անյայտ հեղինակի նկատուածութեան և
համաձայն ս. Գրքի ժամանակագրական տեղե-
կութիւնների:

Իսկ յուն. 6-ից այդ տօնը զեկտ. 25-ը
փոխադրուեցաւ այն պատճառով, որ զեկտ.
25-ին հեթանոսները կատարում էին Dies
Natales (օր ծննդեան) տօնը, և եկեղե-
ցու առաջնորդները հեթանոսութեան յի-
շողութիւնները ոչնչացնելու նպատակով Քրիս-
տոսի ծննդեան տօնը հաստատեցին այդ օրը:
Այս հանգամանքից զատ՝ մեր յիշատակարա-
նը նոյնն է հաստատում ծննդեան տօնակա-
տարութեան վերաբերութեամբ, ինչ որ ներ-
կայ գիտութիւնը (de Iagarde. Altes u. neues
über das Weihnachtsfest. 1891. IV, Paul Ernst
Jablonski. Zwei vergessene Aufsätze; Wernsdorf,

†† Քննարկը հրատարակեց Migne XCVI, p. 1441.
Περὶ τῆς γενήσεως τοῦ Χριστοῦ. Ἰωάν. Conbefis. Historia
Haeresis Monothetarum. Γεωργίου Αρχιεπισκόπου Νικαίας
περὶ τῆς γενήσεως τοῦ Χριστοῦ, πρὸς Ζαχαρίαν τὸν καθολικὸν
μεγάλου Ἀρμενίας 57. 298—309. Կայ եւ հայերէն նախնայ
բարձրագոյնի մասին՝ Մայր Արքեպիսկոպոսական Ն 530
ձեռագրի մէջ, 314 ր. «Թուրք Սրբազան տրեւիցիս Նիկիոյ
իմաստնոյն Յովհաննէս առ երանկի կարուղիքով Հայոց
Չարարիայ վասն տաւնի ծննդեան եւ յարարեան ի սյ
մերոյ»:

* Sachau. Verzeichniss der Syrischen Hand-
chriefften, Berlin 1899 p. 570.
** Assemani B. O. II. P. 164.
*** Историческіе памятники вѣроученія ар-
мянской церкви, относящіеся къ XII столѣтію
СП. 1847.
† Изложение вѣры церкви армянскія,
начертанное Нерсесомъ коволикосомъ, по тре-
бованію благолюбиваго государя Грековъ Ману-
ила. СП. 1875.

Յօդուածագիր:

De originibus sollemium natalis Christi ex festivitate natalis invicti 1757). Այժմ կատարած չկայ ասում է յարգելի ուսուցչակար, որ միայն Հայերն են հաւատարիմ մնացել հնագոյն եկեղեցու սովորութեան ծնունդը յուն. 6-ին կատարելով: Մինչև Գ. դարու կեսերը ոչ մի տեղ իսկ մինչև 376/7 թ. արեւելքում գեկա. 25-ին չէ կատարուել ծննդեան տօնը և այդ ժամանակ կատարելը ծագել է Հռոմում հեթանոսական Dies Natalis տօնի հետ կապուելով որով եկեղեցու հայրերը կամեցել են հեթանոսական տօնի դէմ քրիստոնէականը հաստատել և այսպախանական քաղաքից հեռոջեան տարածուեցաւ բոլոր քրիստոնէական երկիրներում: *

Հեղինակի բուն նպատակը ծննդեան տօնի խնդիրը լուծելը չէ, այդ յիշատակարանը նորան հետաքրքրում է այն պատճառով որ առաջին օրինակն է հայ տառերով ասորերէն բնագիր տեսնել: Երբ է ծագել այդ գրութիւնը: Եթէ արդարեւ յիշատակարանը նախ ասորերէն է գրուած, պէտք է ենթադրել որ շատ վաղ ժամանակներում, երբ Ասորիները դեռ ևս հռոմէական սովորութեան չէին հետեւում գեկա. 25-ին կատարելով ծնունդը կարող էր նոյն իսկ եփրեմի ժամանակները (+373) գրուած լինել, եթէ մի երկու հանդամանք չգժուարացնէին այդ կարծիքն ընդունելու: Գեկ. 25-ին տօնելը Անտիոքում սկսուած է 376 կամ 378 թ: Իսկ լուրերը կարող էին աւելի վաղ Ասորիք հասած լինել, որի համար աշակերտները զինած լինէին Իրենց վարդապետին: Բայց զժուար այդքան հին լինի այդ գրութիւնը որովհետեւ մեր ներկայ յիշատակարանի խմբագիրը որ զբի է առել միայն եփրեմի բացատրութիւնները յայտնում է, շատ եկեղեցիներ գեկա. 25-ին են կատարում, թէև ինքը յուն. 6-ն է շիշդ համարում: Գեկա. 25-ին տօնելը եփրեմի ժամանակ ընդունուած չէր դեռ ևս ոչ Անտիոքում և ոչ մերձակայ եկեղեցիներում. Կ.

* Համեմատել Usener, Religionsgeschichtliche Untersuchungen I, Theil: Das Weihnachtsfest. Bonn 1889. նաև В. Болотовъ. Михайловъ День. Почему Соборъ св. Архистратига Михаила совершается 8 ноября. Хрис. Чтение 1892. Ноябрь.—Дек.

Պոլսում 379 թ. ընդունուեցաւ, կապագովկիայում 382 թ., Եգիպտոսում է. դարու սկզբում իսկ Պաղեստինը երկար ժամանակ դեռ հին սովորութիւնն էր պահպանում: Այս հանդամանքներն ի նկատի ունենալով, պէտք է ասելք, որ մեր յիշատակարանը ոչ եփրեմի ժամանակ է ծագել և ոչ նորա գրական գործունէութեան վայրերում, զօնէ Մծրինը և Երեսսան այն եկեղեցիներին չեն պատկանում, որոնք երկար ժամանակ հաքաւում են գեկա. 25-ին կատարելու սովորութեան դէմ: Իսկ երկիրը Պաղեստինն էր որ մինչև 420 թ. պահպանում էր հին սովորութիւնը, Պաղեստինում գեկա. 25-ին տօնելը հաստատուեցաւ վերջնականապէս Յորնաղ պատրիարքի ժամանակ* (425—458):

Հաւանօրէն մեր յիշատակարանի բնագիրը ծագել է Պաղեստինում մտաւորապէս Ե. դարու կիսերին: Պաղեստինի շրջակայ քրիստոնէաները յատկապէս Ասորիները, պէտք է այս կամ այն կողմի ճշմարտութեան համար կարծիք յայտնէին և ահա մեր յիշատակարանի հեղինակը յուն. 6-ին տօնելու կուսակից է: Այսպիսով Եջմիածնի XIII դարի սկզբում, և մասամբ XII-ի վերջին կիսում գրուած ձեռագիրը, պահպանել է Ե. դարու ստորերէն մի բնագիր Հայոց տառերով: Այս միակ օրինակը չէ, որ հայոց տառադարձութեամբ ասորի բնագիր է պահուած: Եփրեմ Ասորու անունով մնացած է և մի շարական որ պ. Մատն առել է Մայր Աթոռի մատենադարանի № 297 Տօնապատճառ կոչուած ձեռագրից գրուած 1704 թ: Պ. Մառը այս շարականը եփրեմի խիական գործ է համարում: Գրքի շարունակութեան մէջ հեղինակը ասորական և հայոց տառադարձութեան փոփոխութիւնների մասին է խօսում և լիզուարանական քննութիւններ անում, որ զուտ մասնազիտական է և մեր միջակ ընթերցողներին անմատչելի:

Երկրորդ փոքրիկ գրութիւնը, որի մասին խօսում է, եփրեմի անունով մնացած ուղղագրաւ եկեղեցիների հաստատութեան մասին

* Այդ պատճառով էլ մեր հայերը յանախ յարձակում էին Յորնաղի դէմ: Յօդուածագիր:

անվտերական զրու թիւնն է: Հեղինակը այս հատուածի ծագումը կապում է Դաշանց թղթի ծագման միտումների հետ:

Տետրակի վերջում տպուած են երկու գրութիւնները հայ բնագրով և սուսերէն թարգմանութեամբ. ծննդեան տօնին վերաբերեալ գրութեան հայտատու ասորերէն բնագիրը ծանօթութեան մէջ գրուած է ասորի տառերով դարձեալ սուսերէն: Թարգմանութեան հետ:

Գ.

Н. Марр. Агиографические Материалы По Грузинскимъ Рукописямъ Ивера. I. Описание пяти пергаментныхъ Рукописей. СП. 1900.

«Արարատ»-ի անցեալ թուի Մայիսի տետրակում «Հայագիտական տեղեկութիւններ» վերնագրով յօդուածով մենք հաղորդեցինք պ. Մառի Իշ Բոճճկի на Аѳонѣ վերնագրով հետաքրքրական տետրակի բովանդակութիւնը: Այդ տետրակի մէջ հեղինակը գրադուում էր մի շատ կարեւոր խնդրով: Ասորոց, Հայոց և Վրաց քրիստոնէական գրականութեան փոխադարձ ազդեցութեամբ: Պ. Մառը այդ տետրակի մէջ 14 վարքագրութիւններով ցոյց էր տուել թէ Վրացիք հայերէնից են թարգմանել այդ յիշատակարանները և թէ թարգմանութիւնը կատարուել է ոչ ուշ քան է—Ը. դարը: Նոյն նպատակով հեղինակը մտադիր է ուսումնասիրել Վրաց ս. Գրքերը որ հայերէնից է թարգմանուած համարում: Այն Սրբոց վկայարանութիւնները որ այս խնդրին են վերաբերում, պէտք է առանձին հրատարակէ, ինչպէս և Բարազամ և Յովսափ հնդկական վեպի ծագման նուիրած աշխատութիւնը: Ներկայ տետրակը կապուում է վերոյիշեալների հետ նորանով, որ նկարագրութիւն է մազազածեայ այն 5 ձեռագիրների որտեղից Սրբոց վկայագրութիւններն է հանել: Մեզ համար առանձնապէս հետաքրքրական է № 57, որի մէջ են գտնուում Հայոց մի քանի սրբերի, ինչպէս Դաւիթ Դունեցու, ս. Վարդանի, Ատովմի, Սահակ Պարթեւի, ս. Շուշանկան, Հայոց Հայրապետների՝ Արիստակիսի, Վրթանիսի Յուսկաննի, Գրիգորիսի և Դանիէլի և ըն վարքերը, որ հայերե-

նից են թարգմանուած, ինչպէս ցոյց է տուել Իշ Բոճճկի на Аѳонѣ գրքոյկում: Նոյն իսկ ձեռագրի մէջ յիշատակութիւն կայ այդ մասին, բայց անհարազատ ձեռքեր աշխատել են քերել այդ նկատողութիւնը, բարեբաղդարար բոյորովին չէ յաջողուել և կարելի է կարգալ կարմրագեղով գրուած երկու սողերը. «Այս վկայարանութիւնները թարգմանուած են հայերէնից (Эти [мученич]ества съ армя[скаго] переведены) ...» Այդ արարմունքը հեղինակը բացատրում է նորանով, որ վերջին ժամանակներս Վրացիներից մի քանիսը, ինչպէս և այժմ շատերը ասանել են կարողանում այն միտքը, թէ Վրացիք կարող են հայերէնից որ և է բան թարգմանած լինել: Յիշեալ սողերի քերողը կամեցել է ոչնչացնել այդ նկատողութիւնը, որպէս զի ծածկէ հայերէնից թարգմանուած լինելու իրողութիւնը:

Վերջին յաւելուածի մէջ հեղինակն ուղղում և լրացնում է Յագարելիի կազմած նոյն վանքի ձեռագիրների ցուցակը:

Ձեռագրներից հանուած տասը նոյնատիպ պատկերները դադարեալ են տալիս ձեռագրների մասին հնագրական տեսակետով:

Առողջութիւն և եռանդ ենք բարեմաղթում զիտութեան անխոնջ մշակին:

Գ. Վ. ՅՈՂԱՅԷԱՆ



ԵՐԿՐԱԳՈՐԺԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՏՏ

ԳԻՏԵԼԻԲՆԵՐ.

(Շարունակութիւն)**

ՎՆԱՍՍԱԿԱՐ ՄԻՋԱՏՆԵՐ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՅ ԳԷՄ ԿՈՌԵԼՈՒ ՄԻՋՈՅՆԵՐ:

Հացաբոյսի ճանճ կամ կանաչալի (Хлебница или хлебная муха — Chlorops taeniopus) — Այս խիստ վաղրիկ միջատը մեծ վնաս է

* Տես եր. 68:

** Տես Արարատ 1900 թ. համար ԺԱ. եր. 533: